

Կ-867-16.02.2021,09.04.2021-ՏՀ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒ**

**«ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Չափումների միասնականության ապահովման մասին» 2012թ. փետրվարի 8-ի ՀՕ-22-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետում և 19-րդ հոդվածի 1-ին մասում «արբիտրաժի,» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված չափագիտական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի,» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 2-րդ կետում «համար.» բառից հետո լրացնել «, ինչպես նաև չափագիտական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից չափման միջոցի չափագիտական կանոններին ու նորմերին համապատասխանությունը որոշելիս (ստուգելիս).»:

2. Լրացնել նոր՝ 18.1)-րդ և 18.2)-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«18.1) **Չափագիտական վերահսկողություն**՝ չափումների միասնականության ապահովման բնագավառը կանոնակարգող օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված չափագիտական կանոնների և նորմերի խախտումների կանխարգելման, բացահայտման և վերացման նպատակով տեսակը չհաստատված, չստուգաչափված տեսակը հաստատված և ստուգաչափված, սակայն չափագիտական կանոններին և նորմերին չհամապատասխանող չափման միջոցների շուկայահանման և (կամ) շահագործման, չափումների կատարման վկայագրված մեթոդիկաների առկայության, չափումների միասնականության ապահովման բնագավառում տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանմանն ուղղված վերահսկողություն.

18.2) **Չափագիտական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին**՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված չափագիտական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին (այսուհետ՝ տեսչական մարմին)»:

**Հոդված 3.** Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր 7.1) կետով հետևյալ բովանդակությամբ.

«7.1) իրականացնում է Չափագիտության ազգային մարմնի գործունեության մշտադիտարկում.»

**Հոդված 4.** Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 5.** Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 7)-րդ կետից հետո լրացնել նոր 8)-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«8) ծառայությունների մատուցման ոլորտում»

**Հոդված 6.** Օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասը շարադրել՝ հետևյալ խմբագրությամբ.  
«11. Չափման միջոցների ստուգաչափում, բացառությամբ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտի, կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանած կարգով հավատարմագրված իրավաբանական անձինք:»:

**Հոդված 7.** Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.  
«Սույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ցանկի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ներմուծման, ներմուծող կազմակերպության, չափման միջոցի ծագման և արտահանման երկրի վերաբերյալ տեղեկատվությունը Պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվում է Չափագիտության ազգային մարմնին և տեսչական մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:»:

**Հոդված 8.** Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Չափման միջոցների փորձաքննությունն իրականացվում է Չափագիտության ազգային մարմնի կողմից:»:

**Հոդված 9.** Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցների կիրառումը.»:

**Հոդված 10.** Օրենքի 21-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 21. *Տեսչական մարմինը.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված տեսչական մարմինը չափագիտական վերահսկողություն է իրականացնում հետևյալ ուղղություններով՝

1) տեսակը չհաստատված չափման միջոցների շուկայահանման և (կամ) շահագործման նկատմամբ,

2) չստուգաչափված չափման միջոցների շուկայահանման և (կամ) շահագործման նկատմամբ,

3) տեսակը հաստատված և ստուգաչափված, սակայն չափագիտական կանոններին և նորմերին չհամապատասխանող չափման միջոցների շուկայահանման և (կամ) շահագործման նկատմամբ,

4) չափումների կատարման վկայագրված մեթոդիկաների նկատմամբ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված վերահսկողության շրջանակներում լիազորված տեսչական մարմինը չափման միջոցի՝ չափագիտական կանոններին և նորմերին համապատասխանությունը որոշելիս (ստուգելիս)՝ օգտագործում է աշխատանքային չափանմուշ, աշխատանքային չափանմուշի օգտագործման անհնարինության դեպքում սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կարգով հրավիրում է Չափագիտության ազգային մարմնի ներկայացուցչի և (կամ) պահանջում է չափման միջոցի փորձաքննության իրականացում:

3. Վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կարգադրագրի ձևը հաստատում է տեսչական մարմնի ղեկավարը:»:

**Հոդված 11.** Օրենքի 22-րդ հոդվածի.

1. վերնագրում և 1-ին մասում «վերահսկողություն իրականացնող» բառերը փոխարինել «տեսչական բառով»,

2. 1-ին մասը լրացնել նոր 1.2)-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.2) Ըստ անհրաժեշտության ստուգման արդյունքներով արձանագրված իրավախախտման հիման վրա տրված կարգադրագրի հետ մեկտեղ կապարակնքում (դրոշմում):»:

3. 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) ստուգում է ստուգաչափված կամ վկայագրված չափման միջոցների համապատասխանությունը չափագիտական կանոններին ու նորմերին՝ անհրաժեշտության դեպքում հրավիրելով Չափագիտության ազգային մարմնի ներկայացուցիչ:»:

**Հոդված 12.** Օրենքի 24-րդ հոդվածում.

1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ «1. Կարգադրագիրը՝ տեսչական մարմնի ղեկավարի կամ ծառայողի կողմից օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգման ընթացքում կամ իրականացված ստուգման արդյունքներով արձանագրված իրավախախտման հիման վրա իրենց իրավասության սահմաններում ընդունված ակտ է, որն ուղղված է՝»:

2. 3-րդ և 4-րդ մասերում «տեսչությանը» բառը փոխարինել «տեսչական մարմնին» բառերով:

3. 4-րդ մասից հետո լրացնել նոր 4.1 մասով՝ հետևյալ խմբագրությամբ.

«4.1 Կարգադրագրի պահանջները սահմանված ժամկետում չպահպանելը և (կամ) առանց տեսչական մարմնի գրավոր համաձայնեցման չափագիտական վերահսկողություն իրականացնող ծառայողի կողմից դրված կապարակնիքը (դրոշմը) վնասելը կամ հանելը առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:»

4. 5-րդ մասում «վերահսկողություն իրականացնող» բառերը փոխարինել «տեսչական» բառով:

**Հոդված 13.** Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքի ընդունումից հետո չորս ամսյա ժամկետում:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ

### «ԶԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Զափումների միասնականության ապահովման մասին» 2012թ. փետրվարի 8-ի ՀՕ-22-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետում և 19-րդ հոդվածի 1-ին մասում «արբիտրաժի» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված չափագիտական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի» բառերով:

Formatted: Indent: First line: 1.27 cm, Space Before: 0 pt, After: 0 pt, Line spacing: 1.5 lines, Pattern: Clear, Tab stops: 1.9 cm, Left

**Հոդված 2.** Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի`

1. 2-րդ կետում «համար» բառից հետո լրացնել «, ինչպես նաև չափագիտական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից չափման միջոցի չափագիտական կանոններին ու նորմերին համապատասխանությունը որոշելիս (ստուգելիս)»:

2. Լրացնել նոր 18.1)-րդ և 18.2)-րդ կետերով` հետևյալ բովանդակությամբ.

«18.1) Չափագիտական վերահսկողություն` չափումների միասնականության ապահովման բնագավառը կանոնակարգող օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված չափագիտական կանոնների և նորմերի խախտումների կանխարգելման, բացահայտման և վերացման նպատակով տեսակը չհաստատված, չստուգաչափված տեսակը հաստատված և ստուգաչափված, սակայն չափագիտական կանոններին և նորմերին չհամապատասխանող չափման միջոցների շուկայահանման և (կամ) շահագործման, չափումների կատարման վկայագրված մեթոդիկաների առկայության, չափումների միասնականության ապահովման բնագավառում տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանմանն ուղղված վերահսկողություն.

18.2) Չափագիտական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին` Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված չափագիտական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին (այսուհետ՝ տեսչական մարմին):»:

**Հոդված 3.** Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր 7.1) կետով հետևյալ բովանդակությամբ.

«7.1) իրականացնում է Չափագիտության ազգային մարմնի գործունեության մշտադիտարկում.»

**Հոդված 4.** Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 5.** Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 7)-րդ կետից հետո լրացնել նոր [8\)-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.](#)

~~8)-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.~~

«8) ծառայությունների մատուցման ոլորտում»

**Հոդված 6.** Օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.  
[«11. Չափման միջոցների ստուգաչափում, բազառությամբ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտի, կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանած կարգով հավատարմագրված իրավաբանական անձինք:»:](#)

**Հոդված 7. Հոդված 6.** Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.  
«Սույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ցանկի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ներմուծման, ներմուծող կազմակերպության, չափման միջոցի ծագման և արտահանման երկրի վերաբերյալ տեղեկատվությունը Պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվում է Չափագիտության ազգային մարմնին և տեսչական մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:»:

**Հոդված 8.** Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

[«2. Չափման միջոցների փորձաքննությունն իրականացվում է Չափագիտության ազգային մարմնի կողմից:»:](#)

**Հոդված 9. Հոդված 7.** Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը շարադրել ~~հետևյալ~~ [հետևյալ](#) խմբագրությամբ. «1) տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցների կիրառումը.»:

**Հոդված 8-10.** Օրենքի 21-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

**«Հոդված 21. Տեսչական մարմինը.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված՝ տեսչական մարմինը չափագիտական վերահսկողություն է իրականացնում հետևյալ ուղղություններով՝

1) տեսակը չհաստատված չափման միջոցների շուկայահանման և (կամ) շահագործման նկատմամբ,

2) չստուգաչափված չափման միջոցների շուկայահանման և (կամ) շահագործման նկատմամբ,

3) տեսակը հաստատված և ստուգաչափված, սակայն չափագիտական կանոններին և նորմերին չհամապատասխանող չափման միջոցների շուկայահանման և (կամ) շահագործման նկատմամբ,

4) չափումների կատարման վկայագրված մեթոդիկաների նկատմամբ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված վերահսկողության շրջանակներում լիազորված տեսչական մարմինը չափման միջոցի՝ չափագիտական կանոններին և նորմերին համապատասխանությունը որոշելիս (ստուգելիս)՝ օգտագործում է աշխատանքային չափանմուշ, աշխատանքային չափանմուշի օգտագործման անհնարինության դեպքում սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կարգով հրավիրում է Չափագիտության ազգային մարմնի ներկայացուցչի և (կամ) պահանջում է չափման միջոցի փորձաքննության իրականացում:

3. Վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կարգադրագրի ձևը հաստատում է տեսչական մարմնի ղեկավարը:»:

**Հոդված 911.** Օրենքի 22-րդ հոդվածի:

1. Վերնագրում և 1-ին մասում «վերահսկողություն իրականացնող» բառերը փոխարինել «տեսչական բառով»,

2. 1-ին մասը լրացնել նոր 1.2)-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.2) Ըստ անհրաժեշտության ստուգման արդյունքներով արձանագրված իրավախախտման հիման վրա տրված կարգադրագրի հետ մեկտեղ կապարակնքում (դրոշմում):»:

3. 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) ստուգում է ստուգաչափված կամ վկայագրված չափման միջոցների համապատասխանությունը չափագիտական կանոններին ու նորմերին՝ անհրաժեշտության դեպքում հրավիրելով Չափագիտության ազգային մարմնի ներկայացուցիչ:»:

**Հոդված 4012.** Օրենքի 24-րդ հոդվածում.

1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ «1. Կարգադրագիրը՝ տեսչական մարմնի ղեկավարի կամ ծառայողի կողմից օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգման ընթացքում կամ իրականացված ստուգման արդյունքներով արձանագրված իրավախախտման հիման վրա իրենց իրավասության սահմաններում ընդունված ակտ է, որն ուղղված է՝»:

2. 3-րդ և 4-րդ մասերում «տեսչությանը» բառը փոխարինել «տեսչական մարմնին» բառերով:

3. ~~5-րդ մասում «վերահսկողություն իրականացնող» բառերը փոխարինել «տեսչական» բառով:~~ 4-րդ մասից հետո լրացնել նոր 4.1 մասով՝ հետևյալ խմբագրությամբ.

«4.1 Կարգադրագրի պահանջները սահմանված ժամկետում չպահպանելը և (կամ) առանց տեսչական մարմնի գրավոր համաձայնեցման չափագիտական վերահսկողություն հրականացնող ծառայողի կողմից դրված կապարակնիքը (դրոշմը) վնասելը կամ հանելը առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:»

4. 5-րդ մասում «վերահսկողություն հրականացնող» բառերը փոխարինել «տեսչական» բառով:

***Հոդված 11.13. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.***

1.—Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2.—Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքի ընդունումից հետո չորս ամսյա ժամկետում:



**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (4-867-16.02.2021.09.04.2021-SՀ-011/Պ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	2.	3.	4.	5.	6.
1.	ՀՀ կառավարություն	«Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) նոր 6-րդ հոդված	Նախագիծը լրացնել նոր 6-րդ հոդվածով՝ «Հոդված 6. Օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասը շարադրել՝ հետևյալ խմբագրությամբ. «11. Չափման միջոցների ստուգաչափում, բացառությամբ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտի, կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանած կարգով հավատարմագրված իրավաբանական անձինք:»	Ընդունվել է: Ըստ այդմ փոփոխվել են նախագծի հոդվածների համարակալումները:	Ընդունվել է

		<p>Նախագծի նոր 8-րդ հոդված</p> <p>Նախագծի նոր 12-րդ հոդված (առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի 10-րդ հոդված)</p>	<p>Նախագիծը լրացնել նոր 8-րդ հոդվածով՝ «Հոդված 8. Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Չափման միջոցների փորձաքննությունն իրականացվում է Չափագիտության ազգային մարմնի կողմից:»:</p> <p>Նախագծի նոր 12-րդ հոդվածը (առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի 10-րդ հոդված) լրացնել նոր 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «3. 4-րդ մասից հետո լրացնել նոր 4.1-ին մասով՝ հետևյալ խմբագրությամբ. «4.1 Կարգադրագրի պահանջները սահմանված ժամկետում չպահպանելը և (կամ) առանց տեսչական մարմնի գրավոր համաձայնեցման չափագիտական վերահսկողություն իրականացնող ծառայողի կողմից դրված կապարակնիքը (դրոշմը) վնասելը կամ հանելը առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:»:</p>	<p>Ընդունվել է: Ըստ այդմ փոփոխվել են նախագծի հոդվածների համարակալումները:</p> <p>Ընդունվել է: Ըստ այդմ փոփոխվել են նախագծի 12-րդ հոդվածի (առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի 10-րդ հոդված) մասերի համարակալումները:</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>
--	--	---	---	--	---------------------------------------

		<p>«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ</p>	<p>Նախագիծը լրացվել է նոր 2 նախագծերով՝ հետևյալ բովանդակությամբ.  <b>«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ</b>  <b>«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆՍՆՏՈՒՄՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ</b></p> <p><b>Հոդված 1.</b> «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 188-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.</p> <p>Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի և ծառայությունների համապատասխանության պետական վերահսկողություն իրականացնող և Հայաստանի Հանրապետության չափագիտական վերահսկողություն իրականացնող մարմնի ղեկավարի կամ ծառայողի կարգադրագրերով սահմանված պահանջները սահմանված ժամկետի</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է</p>
--	--	--	--	---------------------	--------------------

		<p>«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում լրացումներ</p>	<p>ընթացքում չպահպանելը կամ առանց Հայաստանի Հանրապետության չափազիտական վերահսկողություն իրականացնող մարմնի գրավոր համաձայնեցման չափազիտական վերահսկողություն իրականացնող ծառայողի կողմից դրված կապարակնիքը (դրոշմը) վնասելը կամ հանելը՝</p> <p>առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:</p> <p><i>Հոդված 2.</i> Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող վաթսուներորդ օրը:»</p> <p><b>«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ</b></p> <p><b>«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ</b></p>		
--	--	---	---	--	--

		<p><b>կատարելու մասին»</b>          օրենքի նախագիծ</p>	<p><b>Հոդված 1.</b> «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«Չափագիտական վերահսկողություն կարող է իրականացվել նաև առանց ստուգման հրամանի նախապես ծանուցման»:</p> <p><b>Հոդված 2.</b> Օրենքի 4-րդ հոդվածի 3.1 մասը լրացնել նոր 1.1) կետով՝ հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«1.1) իրականացվում են ստուգում իրականացնող անձի կամ ստուգում իրականացնող պետական մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտին օրենքով նախատեսված իրավասությունների շրջանակներում տրված նախկին ստուգմամբ հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ հանձնարարականի (կարգադրագրի)</p>		
--	--	--	--	--	--

			պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումները:» <b>Հոդված 3.</b> Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող վաթսուներորդ օրը:»		
--	--	--	---	--	--